Bundesrepublik Deutschland
Auswärtiges Amt

Human Rights

ՀԵԻԱ

Ծրագիրը ֆինանսավորվում է
Հայաստանի Հանրապետությունում
Գերմանիայի Դաշնության
Դեսպանության կողմից

Իրականացնող՝
Հայաստանի երիտասարդ
իրավաբանների
ասոցիացիա

«ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Մայիս 2015

Սույն գրքույկը հնարավոր է դարձել հրապարակել Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանության կողմից «Կանանց իրավունքների օրակարգային հարցերի խթանում» ծրագրի իրականացման համար Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային (այսուհետ՝ ՀԵԻԱ) տրամադրված դրամաշնորհի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատու է ՀԵԻԱ-ն, և այն կարող է չարտացոլել Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանության կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության տեսակետները:

«ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնության Դեսպանության կողմից ֆինանսավորվող «Կանանց իրավունքների օրակարգային հարցերի խթանում» ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվում է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի (այսուհետ՝ ՀԵԻԱ) կողմից: Ծրագրի իրականացման դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվել է 2015թ. ապրիլի 14-ին ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ռայներ Մորելի և ՀԵԻԱ-ի նախագահ Կարեն Զաքոյանի միջև: Ծրագրի իրականացումը սկսվել է 2015 թվականի մայիսից և կավարտվի 2015 թվականի հոկտեմբերին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ

1. **Իրականացնել իրավական մոնիթորինգ ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի» (CEDAW) Հայաստանում կիրառման, այդ թվում, ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին 2014 թվականին ներկայացված ՀՀ վերջին (համակցված 5-րդ և 6-րդ) զեկույցի իրավական մոնիթորինգ:**

- Կազմել իրականացված մոնիթորինգի վերաբերյալ զեկույցի նախագիծ, որը կներառի բարեփոխումների առաջարկություններ:
- Քննարկել մոնիթորինգի վերաբերյալ զեկույցի նախագիծը կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մասնագետների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ-ներ) հետ Երևանում և ՀՀ 4 մարզերում (Շիրակ, Լոռի, Գեղարքունիք և Սյունիք):
- Ներառել ՔԿՀ-ների և իրավաբանների առաջարկությունները զեկույցի վերջնական տարբերակում և հրապարակել այն:

2. **Բարձրացնել կանանց իրավունքների հարցերով իրազեկվածության և պաշտպանության մակարդակը:**

- Իրականացնել վերապատրաստման դասընթացներ իրավաբանների և կանանց իրավունքների պաշտպանների համար Երևանում և ՀՀ 4 մարզերում (Շիրակ, Լոռի, Գեղարքունիք և Սյունիք):
- Իրականացնել վերապատրաստման դասընթացներ ՔՀԿ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) ներկայացուցիչների համար Երևանում և ՀՀ 4 մարզերում:
- Անվճար իրավաբանական օգնության տրամադրում բնակչությանը կանանց իրավունքների վերաբերյալ հարցերով՝ ՀԵԻԱ-ի Երևանի, Գյումրու, Վանաձորի, Գավառի գրասենյակների կողմից:

Վերապատրաստման դասընթացները և անվճար իրավաբանական խորհրդատվությունը թեմատիկ առումով կներառեն կանանց իրավունքների ողջ շրջանակը (տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական), սակայն կկենտրոնանան հետևյալ հարցերի շուրջ, որոնք հատկապես հատուկ են Հայաստանին.

- Կանանց վերարտադրողական առողջության իրավունքները, այդ թվում՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման հարցը,
- Կանանց սեփականության իրավունքները, այդ թվում՝ ամուսնության, ամուսնալուծության և ժառանգման համատեքստում,
- Կանանց աշխատանքային իրավունքները, այդ թվում՝ հավասար վճարումը և ծննդաբերության նպաստները, աշխատանքային խտրականությունը,
- Կանանց մասնակցությունը, այդ թվում՝ միջազգային լավագույն փորձը գենդերային քվոտաների և այլ դրական գործողությունների ոլորտներում, ինչպիսիք են տեղական և կենտրոնական իշխանությունը, բիզնես ընկերությունների խորհուրդները, դատական համակարգը և այլն:
- Միջազգային պայմանագրերով ստանձնած Հայաստանի պարտավորությունները և կանանց իրավունքների կիրառման գործնական ուղիները:

- Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների, ինչպես նաև Հայաստանում կանանց իրավունքների ներկա վիճակի, խնդիրների, հետագա զարգացումների և հաջողության պատմությունների վերաբերյալ տեղեկատվական ու վերլուծական նյութերի հրապարակում www.iravaban.net կայքում:

- Ծրագրային տեղեկատվական գրքույկի, կանանց իրավունքների տարբեր ասպեկտների վերաբերյալ 5 տեղեկատվական թերթիկների հրապարակում և տարածում:

3. Սկսել բանավեճ տեղական քաղաքականությունում գենդերային հավասարակշռության թեմայով՝ իրականացնելով տարածաշրջանային սեմինարներ տեղական խորհուրդների մասնակցությամբ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի գաղափարը հիմված է ՀԵԻԱ-ի կողմից բնակչությանն անվճար իրավաբանական խորհրդատվության տրամադրումից բխող կարիքների վերլուծության վրա: Գաղափարը նաև հիմված է այն փաստի վրա, որ CEDAW կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի վերջին զեկույցը հավանաբար կքննարկվի ՄԱԿ-ի կողմից այս տարի, հետևաբար կարիք կա իրականացնել անկախ իրավաբանական մոնիթորինգ:

Կանանց հավասար մասնակցության խնդիրը հասցեագրված է ՀԵԻԱ-ի բոլոր գործերում և ծրագրերում: Մասնավորապես, 2007-2008 թթ. ՀԵԻԱ-ն հոլանդական Համագործակցության զարգացման միջեկեղեցական կազմակերպության ICCO կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացված «Իրավաբանական օգնության և տեղեկատվության օժանդակություն» ծրագրի շրջանակներում իրականացրել է ՀՀ օրենսդրության գենդերային իրավաչափության ասպեկտների իրավական վերլուծություն: Վերջինս կենտրոնացած էր կանանց քաղաքական մասնակցության հարցերի ուղղությամբ, որոնք քննարկվել էին ՔՀԿ-ների և իրավաբանների մասնակցությամբ Երևանում և մարզերում անցկացված սեմինարների ընթացքում: Վերջինիս արդյունքում ՀԵԻԱ-ն ներկայացրել էր առաջարկությունների փաթեթ՝ ուղղված ՀՀ ընտրական օրենսգրքում և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում բարեփոխումների իրականացմանը:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կողմից CEDAW կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների մոնիթորինգը կներառի բարեփոխումների առաջարկների նախապատրաստում: Վերջինս կներկայացվի պատկան մարմիններին և կնպաստի Հայաստանում կանանց իրավունքների պաշտպանության քաղաքականության զարգացմանը:

Իրավաբաններին, կանանց իրավունքների պաշտպաններին, ՔՀԿ-ների և ՏԻՄ-երի ներկայացուցիչներին վերապատրաստելով՝ ծրագիրը միտված է կանանց իրավունքների պաշտպանության կառուցակարգերի հզորացմանը, որը կհանգեցնի՝

- կանանց իրավունքների հարցերով զբաղվող իրավախորհրդատուների թբի բարձրացման,
- անվճար իրավախորհրդատվություն ստացող կանանց թվի աճին:

Բացի այդ, քաջալերված հաջողված պատմություններից, կմեծանա այն կանանց թիվը, ովքեր իրենց աշխատանքային կարիերան կշարունակեն քաղաքական պաշտոններում, ՏԻՄ ավագանիներում և աշխատանքի կդիմեն քաղաքական և իրավական ոլորտում (օր. դատական համակարգ):

Ծրագրի ավարտին կազմակերպվելիք վերջին միջոցառման ընթացքում Ծրագրի ներկայացուցիչները կներկայացնեն Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքներն ու նվաճած արդյունքները, որոնք կհանրայնացվեն և կտեղադրվեն www.iravaban.net կայքում:

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ «ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻՆ

Եթե Դուք ունեք հարցեր «Կանանց իրավունքների օրակարգային հարցերի խթանում» ծրագրով իրականացվող գործողությունների վերաբերյալ, ցանկություն ունեք ներգրավվելու դրանց իրագործմանը, մասնակցելու հայտարարված ուսուցումներին, կամ ունեք առաջարկներ կանանց իրավունքների բարեփոխումների իրականացման ուղղությամբ, երկուշաբթիից-ուրբաթ օրերին՝ ժամը 09.00-13.00 և 14.00-18.00 ընկած ժամանակահատվածում կարող եք դիմել Ծրագիրն իրականացնող կազմակերպությանը.

Ծրագրի իրականացնող՝
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2, 0010
Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճե՝ +37410 58 02 99
Անվճար հեռախոսահամար (թեժ գիծ) 080001110,
Էլ. Փոստ՝ ayla@ayla.am
Վեբ կայք՝ www.ayla.am, www.iravaban.net
ք. Վանաձոր, Վարդանանց 82/1,
հեռախոսահամար 322 22317,
ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1/2,
հեռախոսահամար 312 58236,
ք. Գավառ, Բոշնաղյան 15,
հեռախոսահամար 264 25503
ք. Կապան, Ա. Մանուկյան 1/72,
հեռախոսահամար 285 52511

Ծրագիրը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնության Դեսպանության կողմից կողմից: Բյուջեն կազմում է 32900 եվրո: Ծրագրի տևողությունն է 6 ամիս՝ 2015 թ. մայիսից և մինչև 2016 թ. հոկտեմբեր: